16430

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«25» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0241-23

Ձեռնարկողը՝ ***«ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԷՔՍՊՈՐՏ» ՍՊԸ***
ք. Երևան, Խորենացու 49

Գործունեությունը՝ ***Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0241-23

< 25 **>** դեկտեմբերի **2023թ.**

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԷՔՍՊՈՐՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Չարենցավան համայնք, Բջնի բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ «ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԷՔՍՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանում: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.5լ/վրկ կամ 47304.0մ^3/տարի (Բ կարգ):

Ընկերությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալու համար՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով, 20 տարի ժամկետով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը Ա կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նկարագրական մաս. Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը (այսուհետ՝ Հանքավայր) գտնվում է Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում: Հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները, պաշտպանված է վարարումներից:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջի սահմաններում, որն իրենից ներկայացնում է բյուրեղային բարձրացում խիստ մասնատված էրոզիոն-կառուցվածքային ռելիեֆով: Ռելիեֆը խիստ բարդացված է համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով: Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0մ սահմաններում: Հայցվող տարածքում սողանքային մարմիններ չկան: Հանքավայրի շրջանում զարգացած են դարչնագույն անտառային և մուգ-շագանակագույն հողերը:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը Հրազդան գետն է, որը հոսում է հորատանցքից մոտ 37մ հեռավորության վրա:

Հրաբխածին-նստվածքային ապարների մեջ ներծծված ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում:

Բջնի բնակավայրի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի և ցրտահարության տարիները: Գյուղի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 15-17°C, ամենաբարձրը՝ 31-33°C, ամենացածրը՝ -25°C: Ամենուր դիտվում են լեռնահովիտային քամիներ: Օդի բազմամյա միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 67.0%:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Բջնիի հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով որոնողա-հետախուզական աշխատանքներն ուղեկցվել են ինչպես հանույթային, հորատման, այնպես էլ համալիր հիդրոերկրաբանական փորձնական աշխատանքներով: ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 6141, 20.01.1971թ.) հաստատվել են Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները:

Հանքավայրի շահագործական պաշարները հաշվարկվել են չորս հորատանցքերով, այդ թվում՝

<u>Հանքային ջրի պաշարներ՝</u>

1/67 հորատանցքով - B կարգի՝ 7.0 լ/վրկ կամ 604.8 մ³/օր,
3/67 հորատանցքով - B կարգի՝ 0.4 լ/վրկ կամ 34.5 մ³/օր,
8/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր,
9/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր:
Ընդամենը՝ 10.4 լ/վրկ կամ 898.5 մ³/օր:

<u>Ազատ ածխաթթու գազի պաշարներ՝</u>

1/67 հորատանցքով - B կարգի՝ 3.2 գ/լ կամ 2.3 մ³/մ³,
3/67 հորատանցքով - B կարգի՝ 3.7 գ/լ կամ 2.5 մ³/մ³,
8/69 հորատանցքով - B կարգի՝ 5.0 գ/լ կամ 3.8 մ³/մ³,
9/69 հորատանցքով - B կարգի՝ 3.1 գ/լ կամ 2.1 մ³/մ³:

Հանքավայրի շահագործական պաշարները կարող են օգտագործվել շշալցման, բուժման և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով:

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին, հայտնաբերվել է թիվ 9/69 հորատանցքում

02543163 COMMISSION OF EXPERTS

124.0-165.0մ միջակայքերում և ներկայացված են ուժեղ ջախջախված, ճեղքավորված, մետամորֆացված թերթաքարերով, պատռված պալեոզոյան գնանիտուդային ինտրուզիաներով:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին դինամիկ մակարդակի իջեցումով երկրի մակերեսից ներքև:

1980թ. թիվ 9/69 հորատանցքի կողքին հորատվել է ջրհավաք թիվ 4-ԷԿ հորատանցքը՝ որպես 9/69 հորատանցքի կրկնորդ:

Հորատանցքերի տեղագրական կոորդինատներն են՝

Հորատանցքի N	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բ/բ, մ
9/69	X = 4480955	Y = 8471344	X = 4480948	Y = 8471242	1493.0

Թիվ 9/69 հորատանցքով կտրվել է հանքային ջրի 1 ջրատար հորիզոն տեղադրված 124.0-165.0մ խորության վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 2.07մ երկրի մակերևույթից ներքև է, ջերմաստիճանը կազմում է 16.1^{0}C, ծախսը՝ 1.5լ/վրկ, հանքայնացումը՝ 5.8գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.8գ/լ, իսկ ազատ ածխաթթու գազինը՝ 3.1գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հանքային ջուրը հիդրոկարբոնատ-նատրիումային է:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Համաձայն ՀՀ ԱՆ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ինստիտուտ» ՓԲԸ-ի եզրակացության՝ Հանքավայրի թիվ 9/69 հանքային աղբյուրի ջուրը դասակարգվել է «Բնական բուժիչ-սեղանի հանքային ջուր» դասին և կարելի է օգտագործել շշալցման նպատակով:

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ Ընկերությունը հանքային ջրից ածխաթթու գազի կորզում չի նախատեսում: Ածխաթթու գազի պահանջվող քանակը ձեռք է բերելու «Լիճք» հանքային ջրերի հանքավայրից:

Ընկերությունը, հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո, հորատանցքի հարևանությամբ գտնվող իր սեփականությունը հանդիսացող հողատարածքում կառուցված գործարանի (որտեղ ընկերությունը պահածոներ է արտադրում) արտադրական տեղամասերից մեկում, տեղադրելու է շշալցման հոսքագիծ և իրականացնելու է հանքային ջրի շշալցում:

Ընկերության հողամասն արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության է: Հողամասի տարածքը կազմում է 0.47հա, իսկ շինության մակերեսը՝ 1567.26մ^2:

Ջրհավաք հորատանցքից դեպի հարավ-արևելք 190.0մ հեռավորության վրա գտնվող ընկերության գործարանի շշալցման արտադրամաս հանքային ջրի տեղափոխումը կիրականացվի երկրի մակերեսով 50մմ կամ 73մմ տրամագծի խմելու որակի խողովակաշարով: Հորատանցքից դեպի գործարան հանքային ջուրը մղվելու է պոմպով (աղմուկի մակարդակը 55դԲԱ), թրթռումներ չեն առաջանալու, քանի որ պոմպը տեղակայվում է հատուկ հակավիբրացիոն ռետինե սալիկի վրա:

Հանքային ջրի շշալցման արտադրամասը հագեցած է լինելու ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Շշալցման արտադրամասի համար անհրաժեշտ սարքավորումները և տեխնիկան համապատասխանելու են միջազգային ստանդարտներին: Հանքային ջրի շշալցման արտադրամասում տեղադրվելու է մեկ հատ

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

շշալցման հոսքագիծ՝ պլաստմասյա 0.5, 1.0 և 1.5 լիտրանոց տարաներում շշալցման համար, որի արտադրողականությունը կազմում է 6000 հատ շիշ մեկ/ժամ:

Հաշվետվությամբ ներկայացված աղյուսակներում բերված են շուկայի պահանջարկից ելնելով տարբեր տարողությամբ շշալցման տարաների և աշխատանքային ռեժիմի դեպքում շշալցվող հանքային ջրի քանակները:

Շշալցման արտադրամասի տեխնիկական հագեցվածությունը, ջեռուցման և օդափոխման համակարգերը կհամապատասխանեն արտադրությանը ներկայացվող տեխնիկական նորմերին ու պահանջներին և դրանց օգտագործումը շրջակա միջավայրի վրա չի ունենա բացասական ազդեցություն:

Տարեկան աշխատանքային օրերի թիվը՝ 300 օր:

Ընկերությունը շշալցված հանքային ջուրն իրացնելու է Հայաստանի Հանրապետության և նրա սահմաններից դուրս: Հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար Ընկերությունը համալրվելու է բազմափորձ մասնագետներով:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից (գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր), իսկ Հանքավայրի շահագործման (շշալցման) համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Հանքավայրի թիվ 9/69 հորատանցքի շահագործումն իրականացվելու է փակ ռեժիմով, այսինքն՝ հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ՝ հանքային ջրերի պահպանության և աղտոտումը կանխարգելելու նպատակով:

Ջրհավաք թիվ 9/69 հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում, որը պարսպապատված է տուֆ քարով և ապահովված է պահպանությունով: 1970-ական թթ. կառուցված թիվ 9/69 հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանվել է 160.0մ^2, որն ընդգրկում է բոլոր այն ջրհան կառույցները, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործական պաշարները:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքի պլանավորումը բացառում է հնարավոր մակերևութային աղտոտված ջրերի հոսքը ջրհավաք կառույցներ: Ջրհավաք կառույցների երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը գտնվում են բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը: Ընկերությունն արդյունահանման իրավունք ստանալուց հետո հորատանցքի սանիտարական պահպանության գոտու հողի հատկացումը և հողօգտագործման պայմանագրի կնքումն իրականացնելու է համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Թիվ 9/69 հորատանցքը գտնվում է Բջնի-Հրազդան ճանապարհից 18.0մ, իսկ Հրազդան գետից՝ 37.0մ հեռավորության վրա և պաշտպանված է վարարումներից:

Հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է միայն ջրհան կառույցների լավ տեխնիկական վիճակի, գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու

առկայության և սահմանված կարգով այն պահելու պայմաններում: Շահագործմանը զուգընթաց իրականացվելու են հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար հանքային ջրերի քանակի և որակի մշտադիտարկումներ՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից զերծ պահելու համար:

Հորատանցքի տարածքը բետոնապատված է, հողային շերտ տարածքում չկա, հողային աշխատանքներ կատարվելու են միայն գործարանի տարածքում: Բարեկարգման և վերականգնման աշխատանքներից հետո կկատարվի կանաչապատում՝ Կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի № 108-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Հողի և բուսածածկի խախտում չի նախատեսվում, իսկ իրականացվելիք արդյունահանման աշխատանքների նպատակն է բնական պաշար հանդիսացող հանքային ջրի արդյունավետ և նպատակային օգտագործումը:

Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում մթնոլորտային օդն աղտոտող արտանետումներով և ընդերքօգտագործման թափոններով: Հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու, համաձայն որի թափոնների օբյեկտ չի ձևավորվելու:

Արդյունահանման աշխատանքների իրականացման ժամանակ առաջանալու են արտադրական (նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ) և կենցաղային (թուղթ, սննդի մնացորդ և այլն) թափոններ, որոնց քանակների, տեղադրման և հեռացման լուծումների տեղեկատվությունը ներկայացվել է Թափոնների կառավարման պլանով:

Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված ծառայություններ իրականացնող կազմակերպությունների տարածքում, որտեղ ապահովված են բոլոր անհրաժեշտ պայմանները նավթամթերքների գործածման, պահեստավորման և պահպանման համար: Բուն Հանքավայրի տարածքում նմանատիպ թափոններ չեն ձևավորվելու:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Գազի աղքատացումից խուսափելու նպատակով ջրհավաք հորատանցքը չօգտագործելու դեպքում պետք է անցնի փականային ռեժիմի՝ այսինքն ջրհավաք հորատանցքի բերանի փականը կփակվի և կկապարակնքվի: Դրանով իսկ հանքավայրը կկոնսերվացվի:

Հանքային ջուրը ջրհավաք հորատանցքից գործարանի շշալցման արտադրամաս տանող ջրատար խողովակաշարը ևս կենթարկվի ապամոնտաժման:

Ջրհավաք հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին չի ապամոնտաժվի: Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքերի ելքը հնարավոր աղտոտումից և վնասակար ազդեցությունից պահպանելու համար:

Հանքավայրի տարածքում սահմանված կարգով կիրականացվեն մշտադիտարկումներ՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ (10 օրը մեկ), ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար: Հանքային ջրի, հողային ծածկույթի, մթնոլորտային օդի և կենսաբազմազանության մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է հատկացնել 1.500.000 ՀՀ դրամ: Գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա տնտեսական վնասը գնահատվել է 95256.0 հազ ՀՀ դրամ:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո՝ հետագա հինգ տարիների ընթացքում, տարեկան երկու անգամ իրականացվելու է հորատանցքի տարածքի մշտադիտարկում (տեղազննություն)՝ շրջակա միջավայրի և համայնքի բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով հետագա աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները կիրականացվեն ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջներով նախատեսված միջոցառումները: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազ ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության Հաշվետվության փորձաքննությունն իրականցվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Առողջապահության, Ներքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կոտայքի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ներառվել են Հաշվետվության լրամշակումներում:

Հանքային ջրի արդյունահանման աշխատանքների ընթացքում լրացուցիչ տեխնածին ճնշումներ շրջակայքի, մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, կենսաբազմազանության, լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվի: Նախագծի իրականացումը չի ավելացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կախված հանքային ջրերի շահագործման աշխատանքների բնույթից:

Ընկերությունը, ստանալով Հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման իրավունք, կապահովի շուկայի պահանջարկը հանքային ջրի նկատմամբ: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնում է պարտավորություն մասնահանել տարեկան 300.0 հազ. ՀՀ դրամ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների Հաշվետվության վերաբերյալ Բջնիի բնակավայրում իրականացվել են չորս հանրային քննարկումներ: Հանրային քննակումների ընթացքում ազդակիր համայնքի և շահագրգիռ հանրության կողմից հնչեցված կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքային ջրի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական նորմերը:
- Ապահովել օգտակար հանածոյի արդյունավետ շահագործումը, խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:

Հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

- Ընդերքի մասին օրենսգրքի 67-րդ հոդվածի և առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի N803 հրամանի պահանջներով՝ սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում հորատանցքերն աղտոտումից զերծ պահելու նպատակով:
- Օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ Կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N1484-Ն որոշման պահանջներով:
- ՀՀ Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընկերության կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 9/69 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների Հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան